

**«ԲԱՐՁՐԱՎՈՒՆ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ
ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

N ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/53

ք. Երևան

«02» դեկտեմբեր 2019թ.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Հայկ Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՋԻԷՆՋԻՔԵՅ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս տնօրեն Արամ Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն Պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված Ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների

armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն գինը կազմում է 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հաստատման օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում:

Ծառայությունների դեպքում, մատուցված Ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $VԳ = \frac{VԳ}{NԳ \times Ծ \times Բ}$, որտեղ՝

VԳ-ն Պայմանագրով սահմանված առանձին տեսակի Ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

NԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

NԳ-ն Ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված Ծառայության առավելագույն միավորի գինն է.

Բ-ն մատուցված Ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Ծառայությունը սույն Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝

մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով և սույն Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում,

Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում և (կամ) այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի Կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե Ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի Կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող

ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն Պայմանագիրը կազմված է 32 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1
«Հայթիզնետսթանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459
Գլխավոր տնօրեն


/ստորագրություն/
Կ.Տ.

Լ. Հարությունյան

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ԶԻԷՆԶԻՔԵՅ ԳՐՈՒՊ» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 119/12
Ակրա-Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
Հ/Հ 220563330384000
ՀՎՀՀ 01271541


(ստորագրություն)
Մ. Գասաբյան


ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ

Ծառայության								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Մասնակցի առաջարկած միավոր գների հանրագումար /<< դրամ	Ընդհանուր քանակը	մատուցման	
							հասցեն	Ժամկետը
1	50111170/2	4x4 տիպի ավտոմեքենաներ՝ Շերոլետ Լիվա 212300-55, Վազ – 21214, Ռիազ – 31602, Ռիազ – 3909, Ռիազ – 236323, Գազ-3009TP	Ներկայացված է հավելված 1.1- ում	դրամ	8616000	1	ք. Երևան ք. Գյումրի ք. Վանաձոր ք. Սևան ք. Կապան ք. Գորիս	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 365 օրացուցային օր:

*Տեխնիկական սպասարկման կայանը պետք է ունենա ավտոմեքենայի արատաորոշման, ընթացքային մասի, թափքի և շարժիչի վերանորոգման, անիվների մոնտաժման և անվաբացքի կարգավորման, առանձնացված տեղամասեր համապատասխան սարքավորումներով, ամբարձիչներով և դիտափոսով:

*SU կայանի տեխնիկական անձնակազմը պետք է համալրված լինի ավտոմեքենայի արատաորոշման տեխ.սպասարկման և նորոգման աշխատանքների կատարման համար մասնագիտացված աշխատակիցներով այդ թվում շարժիչագործով, ավտոփականագործով, ավտոէլեկտրիկով, անիվների մոնտաժման և անվաբացքի կարգավորման առանձնացված մասնագետներով:

*Ավտոմեքենայի վերանորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքների ժամանակ պետք է օգտագործվի միայն գործարանային արտադրության նոր պահեստամասեր:

*Ավտոմեքենայի անսարքության ժամանակ նրա ինքնագնաց տեղափոխման անհնարինության դեպքում, նրա տեղափոխումը իրականացվում է կայանի ուժերով: Ընդ որում, Երևանի վարչական տարածքում, տեղափոխումը իրականացվում է անսարքության մասին ծանուցումը / գրավոր կամ բանավոր /ստանալուց հետո 2 ժամվա ընթացքում, իսկ հանրապետության մարզերում՝ ծանուցումը ստանալուց 24 ժամվա ընթացքում:

*Մատուցված ծառայության դիմաց վճարումները կիրականացվեն Հանձնման-Ընդունման արձանագրության երկկողմ հաստատման օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում:

*Երաշխիքային ժամկետ է սահմանվում ծառայությունը ընդունելու օրվանից հաշված՝ ընթացիկ նորոգման աշխատանքների համար մինչև 6 ամիս, իսկ շարժիչի, փոխանցման տուփի, ավտոմատ փոխանցման տուփի և բաշխիչ տուփի հիմնական նորոգման աշխատանքների համար՝ երկու /2/ տարի ժամկետով:

*Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկումը պետք է իրականացվի Երևան քաղաքում գտնվող մեքենաների համար Երևան քաղաքում, իսկ մարզերում՝ ըստ մասնաճյուղերի տեղաբաշխման հասցեների (ըստ հավելված 1-ում նշված հասցեների):

*Ըստ ներկայացված հայտերի՝ ընթացիկ նորոգման աշխատանքների համար երկու աշխատանքային օրվա ընթացքում, իսկ շարժիչի, փոխանցման տուփի, ավտոմատ փոխանցման տուփի և բաշխիչ տուփի հիմնական նորոգման աշխատանքների համար՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/6
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459
Գլխավոր տնօրեն՝



/ստորագրություն/
Կ.Տ

Վ. Հաչոյան



ԿԱՏԱՐՈՂ

«ԶԻԷՆԶԻՔԵՅ ԳՐՈՒՊ» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 119/12
Ակրա-Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
Հ/Հ 220563330384000
ՀՎՀՀ 01271541



Կ. Գասպարյան
/ստորագրություն/

		<p>4X4 տիպի ավտոմեքենաներ Շևրոլետ Նիվա 212300-55, Վազ -21214, Ուազ -31602, Ուազ-3909 Ուազ 236323 Գազ-3009TP</p> <p>Առաջարկվող գինը միավորի համար</p> <p>38 ավտոմեքենա</p>
1	2	3
	Տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքների անվանումը	ԱՊՀ արտադրության ավտոմեքենաների
	1.Շարժիչ	
1	Շարժիչի հանում և տեղադրում	45 000
2	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	50 000
3	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	90 000
4	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում՝ միջադիրի փոխարինումով	50 000
5	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցումով և հղկումով	30 000
6	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում՝ հղկումով և խցուկի փոխարինումով	40 000
7	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	15 000
8	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	30 000
9	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում	35 000
10	Չիդրոձգանի փոխարինում	15 000
11	Շարժիչի մխոցաօղերի փոխարինում	40 000
12	Շարժիչի մխոցամատերի փոխարինում	40 000
13	Ծնկածն լիսեռի հղկում	25 000
14	Ծնկածն լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	50 000
15	Ծնկածն լիսեռի արմատական ներդրակների փոխարինում	3 000
16	Ծնկածն լիսեռի շարժաթևային ներդրակների փոխարինում	2 000
17	Ծնկածն լիսեռի ատամնանիվի փոխարինում	15 000
18	Ծնկածն լիսեռի ուղղում	20 000
19	Ծնկածն լիսեռի առջևի խցուկի փոխարինում	10 000
20	Ծնկածն լիսեռի հետևի խցուկի փոխարինում	30 000
21	Շարժիչի բլոկի փոխարինում	50 000
22	Շարժիչի գլանի փոխարինում	-
23	Մխոցի փոխարինում	40 000
24	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	30 000
25	Բաշխիչ լիսեռի ականցների հանում և տեղադրում կամ փոխարինում	2 000
26	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	25 000
27	Փոկանիվի փոխարինում	20 000
28	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում	8 000

29	Շարժիչի շղթայի փոխարինում	25 000
30	Շարժիչի վանոսների փոխարինում	-
31	Շարժիչի քարտերի նորոգում՝ եռակցումով	10 000
32	Շարժիչի քարտերի փոխարինում՝ միջադիրի փոխարինումով	4 000
33	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	3 000
34	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	5 000
35	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	15 000
36	Շարժիչի յուղի մղիչի նորոգում	20 000
37	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	15 000
38	Շարժիչի յուղի ռադիատորի փողոցակի փոխարինում	-
39	Յուղի ծորակի փոխարինում	10 000
40	Օդաքաշակ փողոցակի փոխարինում	2 000
41	Շարժիչի կոմպրեսորի փոխարինում	2 000
42	Շարժիչի բարձր ճնշման մղիչի փոխարինում	3 000
43	Շարժիչի բարձրիկի հանում, տեղադրում կամ փոխարինում	2 000
44	Ուղղորդիչ վռանի փոխարինում	2 000
45	Բաշխիչ լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	10 000
46	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	8 000
47	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	35 000
48	Թափանիվի առանցքակալի փոխարինում	40 000
49	Շարժիչի գլխիկի կափույրի փոխարինում	3 000
50	Շարժիչի գլխիկի կափույրի միջադիրի փոխարինում	2 000
51	Շարժիչի շարժաթևի փոխարինում	5 000
52	Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	3 000
53	Ատամնանիվի փոխարինում	20 000
54	Ատամնավոր փոկի փոխարինում	8 000
55	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում	2 000
56	Սուխարիկի փոխարինում	10 000
57	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	2 000
58	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	3 000
59	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	3 000
60	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում և տեղադրում միջադիրի փոխարինումով	5 000
61	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	3 000
62	Շարժիչի փոկի ձգիչի նորոգում	2 000
63	Շարժիչի գլխիկի գամասեղի փոխարինում	5 000
64	Շարժիչի գլխիկի գամասեղի փոխարինում՝ բնիկի նորոգումով	15 000
65	Ծնկածն լիսեռի հեղույսի փոխարինում	5 000
66	Շարժիչի քիմիական լվացում	2 000
67	Բաշխիչ լիսեռի նորոգում՝ վռանի տեղադրումով	5 000
68	Ծնկածն լիսեռի կարգավորող տափողակի տեղի նորոգում	2 000
69	Կափյուրների հղկում	2 000
70	Կափյուրի բնիկի նորոգում	5 000
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
71	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	2 000
72	Համակարգչային ախտորոշում	6 000
73	Յուղի ռադիատորի փոխարինում	15 000
74	Յուղի ռադիատորի նորոգում	5 000
75	Շարժիչի ներածման կոլեկտորի հանում, փոխարինում կամ տեղադրում	25 000
76	Շարժիչի ներածման կոլեկտորի միջադիրի փոխարինում	20 000
77	Ավտոմատ փոխանցման տուփի ղեկավարման բլոկի հանում, փոխարինում կամ տեղադրում	5 000

78	Վառոցքի մոմի փոխարինում	5 000
79	Վառոցքի կոճի փոխարինում	5 000
80	Վառելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում	1 000
81	Վառելիքի կոշտ մաքրման գտիչի փոխարինում	2 000
82	Օդի գտիչի փոխարինում	2 000
83	Օդի ծախսի կարգավորիչ հանում և տեղադրում կամ փոխարինում	1 000
84	Օդի ծախսի կարգավորիչ ռետինե խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	2 000
85	Օդի գտիչի փողրակի հանում և տեղադրում	1 000
86	Կարբյուրատորի փոխարինում	7 000
87	Կարբյուրատորի վերանորոգում	10 000
88	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	8 000
89	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	20 000
90	Բոցամուղի կարգաբերում	2 000
91	Ինժեկտորի բոցամուղի խցուկի փոխարինում	3 000
92	Բենզամղիչի փոխարինում	10 000
93	Վառելիքի կոշտ մաքրման գտիչի փոխարինում	5 000
94	Վառելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում	10 000
95	Վառելիքի բարձր ճնշման մղիչի փոխարինում	3 000
96	Վառելիքի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3 000
97	Բռնկման կարգավորում	2 000
98	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	15 000
99	Ղեկավարման բլոկի վերանորոգում	5 000
100	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	15 000
101	Վառելիքի բաքի մաքրում	15 000
102	Օդի ծախսի տվիչի փոխարինում	1 000
103	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	5 000
104	Ջրի խողովակի փոխարինում	3 000
105	Բաքի բենզոմղիչի ցանցի փոխարինում	10 000
106	Բաքի բենզոմղիչի ցանցի մաքրում	1 000
107	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	1 000
108	Տվիչի փոխարինում	1 000
109	Արագարարի փոխարինում	2 000
110	Օդագտիչի իրանի փոխարինում	1 000
111	Էլեկտրական բենզոմղիչի կախոցի փոխարինում	2 000
3. Հոսանքի և արտածման համակարգ		
112	Հոսի փոխարինում	5 000
113	Էլեկտրական հոսի փոխարինում	8 000
114	Հոսի թևակալի փոխարինում	3 000
115	Հոսի փոխարինում և տեղադրում կամ փոխարինում	6 000
116	Արտածման կալեկտորի հանում, տեղադրում կամ փոխարինում	5 000
117	Արտածման կալեկտորի միջադիրի փոխարինում	2 000
118	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	4 000
119	Ռադիատորի նորոգում	10 000
120	Օդորակիչի կոմպրեսորի հանում, տեղադրում կամ փոխարինում	10 000
121	Օդորակիչի կալուսակի հանում, տեղադրում կամ փոխարինում	10 000
122	Օդորակիչի ռադիատորի փոխարինում	15 000
123	Օդորակիչի ռադիատորի նորոգում	15 000
124	Օդորակիչի կոմպրեսորի նորոգում	10 000
125	Օդորակիչի գտիչի փոխարինում	3 000
126	Օդորակիչի ֆրեոնի լիցքավորում	25 000

127	Օդորակիչի հովարանի փոխարինում	8 000
128	Օդորակիչի փոկի փոխարինում	6 000
129	Օդորակիչի փողրակի փոխարինում	3 000
130	Ընդարձակող բաքի փոխարինում	1 000
131	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	1 000
132		5 000
133	Ռադիատորի ռետինե փողրակի փոխարինում	4 000
134	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	3 000
135	Տաքացուցիչ ռադիատորի փոխարինում	15 000
136	Տաքացուցիչ ռադիատորի նորոգում	15 000
137	Տաքացուցիչ շարժիչի փոխարինում	10 000
138	Տաքացուցիչ էլեկտրական փականի փոխարինում	5 000
139	Ջեռուցիչի անջատիչի մեկուսատախտակի նորոգում Գազ 31105	-
140	Ջեռուցիչի անջատիչի մեկուսատախտակի փոխարինում Գազ 31105	-
141	Ջեռուցիչի իրանի փոխարինում	10 000
142	Թերմոստատի փոխարինում	5 000
143	Ջրի պոմպի փոխարինում միջադիրով	15 000
144	Ջրի պոմպի միջադիրի փոխարինում	15 000
145	Ջրի պոմպի առանցքակալի փոխարինում	20 000
146	Ջրի պոմպի խցուկի փոխարինում	20 000
147	Ջրի պոմպի թևակի փոխարինում	1 000
148	Չեմերատորի փոկի փոխարինում	8 000
149	Չեմերատորի փոկի ձգող հղովակի փոխարինում	8 000
150	Ջրի ռադիատորի վերանորոգում	3 000
151	Թերմոստատի միջադիրի փոխարինում	5 000
152	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	7 000
153	Խլարարի խողովակի փոխարինում	7 000
154	Խլարարի անուրի փոխարինում	3 000
155	Խլարարի ներդիրի փոխարինում	5 000
156	Խլարարի կախոցի փոխարինում	2 000
157	Հակասառեցնող հեղուկի փոխարինում	3 000
158	Դիֆուզորի փոխարինում	4 000
4. Կցորդում, փոխանցման տուփ / ՓՏ / և ավտոմատ ՓՏ		
159	Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	8 000
160	Գլխավոր գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	10 000
161	Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում	15 000
162	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	2 000
163	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում	2 000
164	Կցորդման երկժանիի փոխարինում	2 000
165	Փոխանցման տուփի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	80 000
166	Փոխանցման տուփի հավաքածույի փոխարինում	20 000
167	Փոխանցման տուփի առջևի խցուկի փոխարինում	20 000
168	Փոխանցման տուփի հետևի խցուկի փոխարինում	10 000
169	Փոխանցման տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	20 000
170	Փոխանցման տուփի քանդում, արատավորում, հավաքում	20 000
171	Փոխանցման տուփի պատյանի փոխարինում	20 000
172	Փոխանցման տուփի առանցքակալի փոխարինում	20 000
173	Փոխանցման տուփի միջանկյալ լիսեռի փոխարինում	20 000
174	Փոխանցման տուփի ատամնակալի փոխարինում	3 000
175	Փոխանցման տուփի առաջնային լիսեռի փոխարինում	5 000

176	Փոխանցման տուևի առաջնային լիսեռի առանցքակալի փոխարինում	4 000
177	Փոխանցման տուևի երկրորդային լիսեռի փոխարինում	20 000
178	Փոխանցման տուևի փոխարկման մեխանիզմի փոխարինում	20 000
179	Փոխանցման տուևի բարձիկի փոխարինում	8 000
180	Փոխանցման տուևի փոխանցման լծակի փոխարինում	2 000
181	Փոխանցման տուևի փոխանցման ագույցի փոխարինում	2 000
182	Փոխանցման տուևի քարտերի փոխարինում	2 000
183	Փոխանցման տուևի յուղի փոխարինում	5 000
184	Ավտոմատ փոխանցման տուևի հանում, տեղադրում կամ փոխարինում	-
185	Ավտոմատ փոխանցման տուևի պատյանի փոխարինում	-
186	Ավտոմատ փոխանցման տուևի ատամնանիվի փոխարինում	-
187	Ավտոմատ փոխանցման տուևի սկավառակների փոխարինում	-
188	Ավտոմատ փոխանցման տուևի յուղի և յուղի գտիչի փոխարինում	-
189	Ավտոմատ փոխանցման տուևի յուղի գտիչի փոխարինում	-
190	Ավտոմատ փոխանցման տուևի ռադիատորի փոխարինում	-
191	Ավտոմատ փոխանցման տուևի ռադիատորի նորոգում	-
192	Ավտոմատ փոխանցման տուևի յուղի մղիչի փոխարինում	-
193	Ավտոմատ փոխանցման տուևի յուղի մղիչի խտաբուկերի փոխարինում	-
194	Ավտոմատ փոխանցման տուևի սոլենոիդի փոխարինում	-
195	Ավտոմատ փոխանցման տուևի կոնվերտերի հանում, տեղադրում կամ փոխարինում	-
196	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	3 000
197	Վազքաչափի տվիչի փոխարինում	3 000
198	Ագույցի կամ հիդրոագույցի փոխարինում	3 000
199	Համաժամիչի փոխարինում	3 000
200	Փոխանցման տուևի մեխանիզմի կապրոնների փոխարինում	2 000
201	Կցորդման երկժանի փոխարինում	3 000
202	Կցորդման երկժանի փոշեթիկնոցի փոխարինում	2 000
203	Կցորդման երկժանի զսպանների փոխարինում	2 000
204	Կցորդման փողրակի փոխարինում	2 000
205	Կցորդման կարգավորում	3 000
206	Կցորդման տանող և տարվող սկավառակների փոխարինում	3 000
207	Կցորդման գլխավոր գլանի հեղուկի բաքի փոխարինում	3 000
208	Փոխանցումը կարգավորող ձողի փոխարինում	3 000
5. Բաշխիչ տուևի, կարդանային լիսեռ		
209	Բաշխիչ տուևի հիմնական նորոգում	35 000
210	Բաշխիչ տուևի քանդում և արատավորում, հավաքում	35 000
211	Բաշխիչ տուևի իրանի փոխում	10 000
212	Բաշխիչ տուևի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	5 000
213	Բաշխիչ տուևի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	5 000
214	Բաշխիչ տուևի դիաֆրագմաների փոխարինում	-
215	Բաշխիչ տուևի դիֆերենցիալի փոխարինում	4 000
216	Բաշխիչ տուևի միջանկյալ լիսեռի փոխարինում	3 000
217	Բաշխիչ տուևի առաջնային լիսեռի փոխարինում	3 000
218	Բաշխիչ տուևի երկրորդային լիսեռի փոխարինում	3 000
219	Բաշխիչ տուևի երկժանի փոխարինում	3 000
220	Բաշխիչ տուևի բարձիկի փոխարինում	3 000

221	Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում	3 000
222	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	3 000
223	Բաշխիչ տուփի շարժաբերի փոխարինում	3 000
224	Բաշխիչ տուփի յուղի փոխարինում	3 000
225	Բաշխիչ տուփի տվիչի փոխարինում	3 000
226	Բաշխիչ տուփի ելուստի փոխարինում	3 000
227	Բաշխիչ տուփի արգելակման թմբուկի փոխարինում	3 000
228	Բաշխիչ տուփի արգելակման թմբուկի կոճղակների փոխարինում	3 000
229	Բաշխիչ տուփի արգելակման թմբուկի կոճղակների կարգավորում	3 000
230	Բաշխիչ տուփի արգելակման մեխանիզմի փոխարինում	3 000
231	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3 000
232	Բաշխիչ տուփի ատամնանիվի փոխարինում	3 000
233	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	3 000
234	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի առանցքակալի փոխարինում	3 000
235	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի սատելիկների փոխարինում	3 000
236	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	3 000
237	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	3 000
238	Էլաստիկ մուֆտի փոխարինում	3 000
239	Կարդանային լիսեռի կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	3 000
240	Կարդանի հեղուսների փոխարինում	3 000
6. Առջևի և հետևի կամրջակներ		
241	Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	25 000
242	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտոր) քանդում, արատավորում և հավաքում	30 000
243	Առջևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում կամ փոխարինում	8 000
244	Առջևի կամրջակի կիսասռնու խցուկի փոխարինում	25 000
245	Առջևի կամրջակի կիսասռնու խցուկի խտաբուկերի փոխարինում	2 000
246	Կամրջակի ռեդուկտորի յուղի փոխարինում	5 000
247	Առջևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	3 000
248	Առջևի կամ հետևի բլոկավորման համակարգի փոխարինում	3 000
249	Առջևի կամրջակի կիսասռնու գնդե հողակապի փոխարինում	3 000
250	Ձախ կամ աջ կիսասռնու գնդե հողակապի փոշեթիկնոցի փոխարինում	3 000
251	Ռեդուկտորի փոխարինում	3 000
252	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	4 000
253	Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	20 000
254	Հետևի կամրջակի քանդում, արատավորում և հավաքում	25 000
255	Հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում կամ փոխարինում	10 000
256	Հետևի կամրջակի կիսասռնու առանցքակալի փոխարինում	12 000
257	Հետևի կամրջակի կիսասռնու առանցքակալի խցուկի փոխարինում	2 000
258	Հետևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	3 000
259	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	5 000
260	Հետևի կամրջակի բլոկավորման համակարգի նորոգում	3 000
261	Կամրջակի տվիչի փոխարինում	2 000

262	Առջևի կիսասունները միացնող ագույցի փոխարինում	2 000
263	Առջևի կամրջակի շրջադարձի բռունցքի փոխարինում	2 000
264	Առջևի կամրջակի շրջադարձի գնդաձև հենակի փոխարինում	2 000
265	Տանող կցաշուրթի փոխարինում	3 000
266	Սատելիտների հավաքման իրանի և սունիի փոխարինում	5 000
7. Կախոց		
267	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	25 000
268	Հեծանի հանում և տեղադրում կամ փոխարինում	5 000
269	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	5 000
270	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	5 000
271	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	3 000
272	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	3 000
273	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	4 000
274	Ձախ կամ աջ հողակապի խցուկի փոխարինում	3 000
275	Ձախ կամ աջ հողակապի նորոգում	5 000
276	Ձախ կամ աջ հողակապի փոշեթիկնոցի փոխարինում	3 000
277	Սռնացքի փոխարինում	12 000
278	Պտուտակավոր հողակապի փոխարինում	7 000
279	Ճոճանակային լծակի վռանի փոխարինում	3 000
280	Ճոճանակային լծակի փոխարինում	3 000
281	Մեղմիչի թասակի փոխարինում	2 000
282	Առջևի զսպանակի փոխարինում	10 000
283	Առջևի մեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	10 000
284	Մեղմիչի վռանների փոխարինում	5 000
285	Մեղմիչի ամրացման կալունակի փոխարինում	5 000
286	Մեղմիչի մետաղական վռանի փոխարինում	2 000
287	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	2 000
288	Ներքևի լծակի վռանների փոխարինում	2 000
289	Ներքևի լծակի հեղույսի փոխարինում	2 000
290	Մեղմիչի հարվածիչի (բարձիկի փոխարինում)	4 000
291	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	2 000
292	Վերևի լծակի վռանների փոխարինում	5 000
293	Վերևի լծակի հեղույսի փոխարինում	2 000
294	Գնդե հողակապերի փոշեթիկնեցի փոխարինում	2 000
295	Գնդե հողակապերի փոխարինում	1 000
296	Առջևի և հետևի կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	3 000
297	Առջևի և հետևի կայունարարի կանգնակների փոխարինում	3 000
298	Առջևի և հետևի կայունարարի վռանների փոխարինում	2 000
299	Կայունարարի կալունակի փոխարինում	8 000
300	Կայունարարի մետաղածողի կալունակ	1 000
301	Հետևի զսպանակների փոխարինում	2 000
302	Հետևի ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	2 000
